ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունիսի 25-ին ժամը 15:00-ին քաղաք Էջմիածին, Սբ. Մ. Մաշոտցի 0 հասցեում գտնվող Վաղարշապատի համայնքապետարանի վարչականի շենքի առաջին հարկի ավագանու նիստերի դահլիճում հրավիրվել է Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի արտահերթ նիստը, որին մասնակցելու համար ներկայացել են Վաղարշապատ համայնքի ավագանու 11 անդամ, այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը՝ հիմք ընդունելով գրանցման արդյունքները:

Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի արտահերթ նիստին ներկա են համայնքապետարանի աշխատակիցներ, հրավիրված են լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Սմբատյանը:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.3-րդ հոդվածով սահմանված կարգով նիստը գումարվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացնելու և համայնքի ղեկավար ընտրելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավիրված ավագանու նիստին օրենքով սահմանված կարգով կես ժամվա ընթացքում չի ներկայացել նիստ վարողը՝ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը և ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին, ուստի նիստը իրավազոր չէ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդված 3-րդ մասով՝ նիստը համարվում է չկայացած:

Ավագանու նիստն ավարտվեց 2025 թվականի հունիսի 25-ին ժամը 15:30-ին:

Հ/Հ Ազգանուն Անուն	
1. Սնակ Խաչատրյան	
2. Վահրամ Ղարիբջանյան	
3. Կարեն Գնորգյան	
4. Նորայր Օհանյան	
5. Էմմա Պատուրյան	
6. Էդգար Թամազյան	
7. Արմեն Դավթյան	
8. Քրիստինե Հակոբյան	
9. Ռուբիկ Ենոքյան	
10. Ջիվան Աբրահամյան	
11. Կարինե Միքայելյան	

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Կ. ՍՄԲԱՏՅԱՆ